ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆԸ ՈՐՊԵՍ ԲԱԶՄԱՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԹԻՄԻ ԱՆԴԱՄ

Բազմամասնագիտական թիմը մասնագիտական խումբ է, որի գործունեությունն ուղղված է սովորողների համար բարենպաստ և արդյունավետ պայմաններ ստեղծելուն:
Բազմամասնագիտական թիմի անդամներն են

- **Ուսուցիչ**
- **Հոգեբան**
- **Լոգոպեդ**
- **Հատուկ մանկավարժ**
- **Բժիշկ**
- **Ուսումնական գործընթացին աջակցող այլ մասնագետներ:**

Դպրոցական հոգեբանի աշխատանքի կարևոր բաղադրիչներից է բազմամասնագիտական թիմի անդամ լինելը: Բազմամասնագիտական թիմում դպրոցական հոգեբանի հիմնական դերը թիմի անդամներին

- ծանոթացնել երեխաների անձնային առանձնահատկությունների հետ
- ներկայացնել երեխաների ինտելեկտուալ կարողությունները և հմտությունները
- ցույց տալ հոգեբանական դժվարությունների հետևանքները վարքային դրևորումների վրա
- դուրս բերել և ներկայացնել ինքնագնահատականի, ուսումնական մոտիվացիայի խնդիրները

Բազմամասնագիտական թիմն օգնում է խուսափել աշխատանքում սուբյեկտիվությունից և հնարավորություն է տալիս օբյեկտիվորեն գնահատել երեխայի ներկա վիճակը, որի հիման վրա էլ կազմվում է աշխատանքային պլան:
Բազմամասնագիտական թիմում դպրոցական հոգեբանը անդրադառնում է մի քանի խնդիրների լուծմանը:

1. Ներկայացնել երեխայի մոտ հոգեաշխատորոշիչ աշխատանքի, դիտման, դասալսումների արդյունքում դուրս բերված դժվարությունները:
2. Ներկայացնել աշակերտին տարբեր կողմերից՝ պարտադիր նշելով նրա դրական և ուժեղ կողմերը:
3. Ձևավորել մեկ միասնական մոտեցում, որը ընդունելի կլինի թիմի բոլոր անդամների կողմից և կնպաստի երեխայի կողմից խնդրի առավել արդյունավետ հաղթահարմանը:
4. Բազմամասնագիտական թիմում ձևավորել դրական, անքննադատ և երեխայի հանդեպ անվերապահ ընդունման մթնոլոր: :
5. Ներկայացնել երեխային առանց պիտակավորումների և գնահատականների: Ներկայացնել աշակերտին որպես անձ, ով ունի դժվարություններ, որոնց հաղթահարման համար անհրաժեշտ է տվյալ մասնագիտական թիմի համաձայնեցված աշատանքը:

Բազմամասանագիտական թիմի խնդիրներն են

- Խնդիրների վաղ աշխորոշում
  - **Ուսումնական**
  - **Հոգեբանակն**

Այս նյութը ստեղծվել է Եվրոպական միության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցիացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները:

- **Խոսքային**
- **Վարքային**

- Սովորողների ակտուալ հնարավորությունների դուրսբերում
- Սովորողի աջակցության համար անհրաժեշտ թղթաբանության պատրաստում
- Ծնողներին, ուսուցիչներին, սովորողներին աջակցող անձնակազմի աջակցության տրամադրումշտկողական աշխատանքների կազմակերպման հարցում
- Աշխատանքների մշտական վերահսկողություն և անհրաժեշտության դեպքում փոփոխությունների իրականացում սովորողի անհատական պահանջներին համապատասխան
- Սովորողների համար անհատական աշխատանքային պլանի կազմում, ժամանակացույցի և մասնագիտական խմբի հստակեցում
- Նախադպրոցական տարիքում դպրոցին պատրաստվածության ախտորոշում ռիսկային խմբերին դուրս բերելու

Այս նյութը ստեղծվել է Եվրոպական միության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցիացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները: